## ԱԽԱԼՑԻԽԷ

Իմ Ախալցիխէ՛, իմ ծննդավա՛յր,
Հարազատ քաղաք, իմ կանաչ օրրան,
Գուրգուրել ես ինձ ինչպէս բարի մայր
Դու կանաչ դըրախտ, ծով երջանկութեան:

Հարազատ են ինձ քո ծառերն ամէն,
Ամէն թըփի հետ մի յուշ է կապուած,
Վարդերըդ այնպէս փարթամ կը ծաղկեն,
Ինչպէս հայրենի երկիրն իմ ծաղկած:

Երբ ման եմ գալիս Փոցխովի ափին,
Անցած օրերն եմ ես յիշում նորից,
Զարթնում են մէկ մէկ յուշերըս կրկին,
Քաղցըր յուշերըս ոսկէ մշուշից:

Թողել ես թաւիշ ծոցիդ մէջ ծաղիկ,
Ծաղիկ յոյզերն իմ ու սէրն իմ գարուն.
Ապրել եմ ուրախ, քեզ պէս երջանիկ
Ի՛մ ծննդավայր, դու իմ ոսկետուն:

Ինձ հետ բոյ առած ամէն ծառ դալար,
Վըկայ է անմեղ քաղցըր պատմութեան,
Ամէն յիշատակ սուրբ է ինձ համար,
Նըրանք սերմերն են ներկայ խնդութեան:

## ԹՈՂԻ ՄԵՆԱԿ

Իմ հայրենի արեւի հետ, արեւ եարիս թողի մենակ,
Ինքը երազ, երազ եարիս, ա՜խ, անմուրազ թողի մենակ:
Իմ փոխարէն, իմ վարդ եարին հիմա արեւն է համբուրում,
Դաշտի միջին հողմերի դէմ իմ վարդ եարին թողի մենակ:

Սիրուններից սիրուն էր նա, ոնց լուսնակը աստղերի մէջ.
Ես արեգակ, ինքը՝ լուսին, մենակ թողի աստղերի մէջ.
Լաց մի՛ լինի ու մի՛ ծածկիր դէմքըդ սեւ ամպ թաշկինակով,
Թէ չէ, քեզ չեմ կարող գտնել հազար ոսկի աստղերի մէջ:

ԴԵՐԵՆԻԿ ԶԱՐԽՃԵԱՆ



## ԳԸԶԳՈՒԼԷՍԻ

( Հէքեաթ )

Բախտին անոյշ համբոյրներ կը գըգուէին այտն աղջըկան,
Եւ երազին թոյլ թեւեր կը գըծէին իր ապագան.
Ու նէ հասակ կը նետէ դարաստին մէջ դիւթական,
Հուրիներով պաշարուած, ինք դիցուհի աննըման:

Ուռիներէն վարսաղեղ՝ ճիւղ մը կտրած ամէն օր,
Սուլթանն հըպարտ կը պճնէր ճակատն անոր գեղօրօր,
Ու պալատին մարգարիտ մ՚ըլլար աղջիկն իր աղուոր՝
Կը պարծենար, կը սոնքար, սիրտը կ՚ուռէր հովերով:

Գեղեցկութի՛ւնն ես, դու, ի՛մ հուրի, աղջի՛կ ոսկեհեր,
Վոսփորի խաժ ալիքներ կուրծքիդ կումբերն են չըներ,
Ու աչքերուդ խոր՝ ինկեր երկնի կապոյտն յուսաբեր,
Եւ ծաղիկներ քու բոյրէդ կ՚առնեն հրապոյր ու հրաւէր:

Օր մը սակայն, դժնէ՛ օր, այտերը վառ դեղնեցան,
Երբոր լըսեց վըհուկէն թէ պիտ՝ ըլլայ որս մահուան
Իր թարմագեղ հասակին՝ խայթուած իժէն դաւաճան.
Գալարեցաւ բընութիւնն ու ծաղիկներ խամրեցան...

Սարսափեցաւ սուլթանն ալ, մոլեգնեցաւ ու փըրփրա՛ց,
Սաստեց ահեղ վըհուկին, բայց հուսկ ուժգին զահանդած,
Ուզեց փրկել աղջիկն իր՝ մահուան բերնէն լայնաբաց,
Որ կը սպառնար խորտակել անոր չքնաղ յօրինուած:

* * *

Հոն՝ ուր ջուրերն համբոյրով մը կը գուգուին իրարու,
Սիրախառնուրդ գորովով՝ ջուրեր երրեակ թեւերու,
Ոսկեղջուրի, Վոսփորի, Մարմարայի բացերու,
Կանգնեց սուլթանն աչքին տակ՝ ոսկի դղեակն յոյսերու:

© National Library of Armenia

Փարոս մ'էր ան ծովուն վրայ, կարմիր աչքով մշտավառ,
Ու հոն փակեց աղջիկն իր, հեռու մահէն անարդար,
Լուռ՝ նենգամիտ օձերու յարձակումէն դողահար...
Հէգ աղջիկն հոն բանտարկուած լացաւ կեանքն իր ցաւագար:

Եկաւ ձմեռ խստաշունչ, կաղկանձեցին քամիներ,
Մինչդեռ փարոսն աղջիկան մընաց կանգուն անվեհեր.
Բայց սիրտդեղ իր հոգին փոթորկեցաւ սիրտն ի վեր,
Տառապանքի բաժակէն խըմելով տիւ ու գիշեր:

Հասաւ գարունն երջանիկ արեւաբոյր օծութեամբ,
Սիրատենչիկ յուզումով խայտաց արիւնն ապըստամբ
Նպէլագեղ օրիորդին. բոյր ու ծաղիկ, հով ու ամպ
Զըղագրգիռ ցնցեցին աչքն ու հոգին սիրատարփ:

Եկաւ ամառն հասկաթուռ, կեանքի հասուն բերկրութիւն.
Գոյնով, սիրով առլցուն կը խայտար ժիր մանկութիւն.
Աղջիկն յուզուած բանտին մէջ կը գալարուէր տրտմաւուն,
Ու կը ցանկար խառնըւիլ կեանքի շարժման օրօրուն:

Միակ տենչանքը կեանքէն՝ էր խաղողի սաթ ողկոյզն
Իր ձեռքերուն մէջ սեղմել ու ճաշակել սրտայոյզ.
Եւ մեղրակաթ քաղցրութեան մէջ մոռնալ ցաւն իր անյոյս՝
Որ զերդ վամբիռ՝ կը կրծէր լարերն հոգւոյն նրբահիւս:

Սապատին մէջ ծըւարած՝ կը ննջէր մահը դաժան.
Իժ մը նենգոտ բունած էր սաթերուն տակ քաղցրահամ.
Հասաւ հարուածն ահաւոր, երազ օրերը սեւցան,
Մեռաւ արեւն ալ սրտին մէջ սուլթանին յաղթական:

Ժոռատ վրհուկն անկիւնէն վատ քըրքիջով կը խնդա՞ր...

1954



## ԱՅԱ ՍՈՖԻԱ

Երկնակառոյց հիման վըրայ հաւատքի
Յուստինեան մայր տաճարն ահա կը կանգնի.
Ոսկի, մարմար ամէն կողմէն կը տեղան
Եւ որմերուն կը քանդակուի լոյս խորան:

Հոն է արքան, բանուորներուն առաջնորդ,
Անոնց կոպիտ բազմութեան մէջ՝ լուսայորդ.
Հրաման, յորդոր, սաստ, քաջալեր կը զուգուին
Սիրտերն ամուր շաղկապելու անմեկին:

Ամպերու ծոցն ըրած կայան երկնային
Հսկայ գմբէթն արքայական տաճարին,
Կը սըլանայ մտքի զըւարթ խոյանքով,
Հրաշքի բոցէն ձեւ ու մարմին առնելով:

Նաւակատիքն է... արեւուն հետ ոսկի,
Արքան բազմած կառքին վըրայ քառաձի,
Կ'աղաղակէ յաղթեցի քեզ Սողոմոն,
Հազարամեայ փառքիդ մէջ չես միայն դուն:

Հոն կ'ամփոփուէր անհունութիւնն անմահին
Թեւերուն տակ աստուածընկալ սուրբ խաչին,
Կամար կամար միշտ բարձրացան սըլացիկ՝
Սրտերն՝ աղօթք դարձած եւ խունկ բալաձիգ:

Բայց այժմ, աւա՜ղ, ժայռ մը ինչպէս վիթխարի,
Գըլրկած հարուածը դարերուն կը հանդէպ,
Շըքեղ կառոյցքն հոլանելով տրտմօրէն
Ժամանակի քանդիչ ձեռքին տակ նորէն:

1954 Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

© National Library of Armenia